ՎԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ՋՈՒՋԵՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ

Ս. Ս. ՁԻԼԻՆԳԱՐՅԱՆ

1966 թ. Նոյեմբերյանի շրջանի Ջուշևան գյուղի արևելյան ծայրամասում «Միջին մատ» կոչվող վայրում շինարարական աշխատանքների ժամանակ բանվեց վաղ հայկական ժամանակաշրջանի 3 դամբարան, որոնց ստորին շերտում հայտնաբերվեցին բրոնզեդարյան այլ դամբարաններ՝ ջարդված խեցեղենով։ Բացված դամբարանների շրջակայքում պեղվեց 11 դամբարան։

Դամբարանները (յուրաքանչյուրի միջին երկարությունը՝ մոտ 1,50—2,20 սմ) ուղղված էին հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք։ Սրանք կանոնավոր քարարկղներ էին՝ մի ծայրը նեղ, մյուսը՝ լայն, անհամաչափ դասավորված՝ հավանաբար շրջակայքում ավելի վաղ շրջանի դամբարանների գոյության պատճառով։ Հանգուցյալները թաղված էին կողքի վրա, ոտքերը կիսածալ վիճակում։ Դամբարաններում կավամանները սակավաթիվ էին՝ պատրաստված լավ մաղած, բաց կարմրավուն կավից, իսկ զենքերը հիմնականում պատրաստված էին երկաթից, զարդերը՝ պղնձից, բրոնզից, արծաթից։

Քննենք հայտնաբերված նյութերն ըստ դամբարանների։

Առաջին դամբարանը (վթարված) կողմնորոշված էր արևելքից-արևմուտք։ Այստեղ հայտնաբերվեցին սարդիոնից, ագատից, պաստայից ու ապակուց պատրաստված տակառաձև, կլոր և գլանաձև ուլունքներ (տախ. 2, նկ. 5)։ Դամբարանում անվնաս էր մնացել մանրահատիկ կավից պատրաստված կարմրավուն, մեկ կանթանի 23 սմ բարձրությամբ մի անոթ։

Երկրորդ դամբարանը գտնվում էր առաջինից երեք մետր հեռավորության վրա, դեպի հարավ (երկարությունը՝ 2,10, լայնությունը՝ 80, խորությունը՝ ծածկասալից 95 սմ)։ Հանգուցյալը թաղված էր աջ կողքի վրա, ձեռքը գլխի տակ, ծնկները մի փոքր կորացած վիճակում։ Դամբարանում հայտնաբերվեցին 3 կավաման, երկաթե դաշույն, նիզակ, լանջապանակի մնացորդներ, բրոնզե շղթաներ և մեկ սրոց։ Հանգուցյալի ինքնատիպ սուրը դրված էր գոտկատեղի աջ կողմում (տախ. 1, նկ. 1)։ Այն զգալիորեն քայքայված է, ունի միաձույլ շեղբ և օղակաձև դաստապան։ Սրի երկարությունը 52 սմ է, շեղբի լայնությունը միջին մասում՝ 4 սմ, իսկ դաստապանի երկարությունը 8 սմ։ Հանգուցյալը պինված է եղել նաև երկաթե նիզակով (ծայրի երկարությունը՝ 25, իսկ լայնությունը՝ միջին մասում 6 սմ), որը համեմատաբար ավելի լավ է պահպանվել (տախ. 1, նկ. 1)։ Նիզակը մեծ է, ունի լայն սայրեր և համեմատաբար կարճ կոթառ։ Նման նիզակներ հայտնաբերվել են նաև Մակարաշենում, Վանում, Կարմիր բլուրում և Խրտանոցում[1]։

Նիզակի կրկնօրինակը գտնվել է նաև Աթարբեկյանում և վերագրվում է

---

[1] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 288.

մ. թ. ա. VII—VI դդ-ին[2]։ Դամբարանում դրված սրոցը, որի ծայրի մասում կա անցք՝ գոտիկից կախելու համար, ունի 10 սմ երկարություն։ Նման սրոցներ հայտնաբերվել են Նոյեմբերյանի լճակաձոր գյուղում և Գոլովինոյում[3]։ Նույն մեծությամբ սրոցներ գտնվել են նաև Պետրոպավլովյան կայարանի XI դամբանաբլուրում[4]։ Նշված դամբարանում հայտնաբերվեցին նաև բրոնզե հաստ շղթաները, որոնց ծայրերը վերջանում են բրոնզե բարակ թիթեղիկներով։ Դրանք հավանաբար օգտագործվել են որպես թամբուզարդեր կամ լանջապանակը կապելու միջոցներ։ Ուշագրավ է հանգուցյալի լանջապանակը, որը տվյալ դարաշրջանում անձնական պաշտպանության ամենակարևոր միջոցներից էր և տարածված էր ավելի վաղ ժամանակաշրջաններից։ Լանջապանակներ հայտնաբերվել են Գոլովինոյում[5], Արթիկում և Լճաշենում[6] և Գետաբեկում՝ Ա. Իվանովսկու կողմից[7]։

Ըստ Հ. Մնացականյանի, Անդրկովկասի բնիկները լանջապանակները սկսել են օգտագործել դեռևս ուշ էնեոլիթի շրջանում[8], իսկ ըստ Ի. Դյակոնովի՝ լանջապանակները առաջին անգամ օգտագործվել են Միջագետքում՝ մ. թ. ա. երրորդ հազարամյակից սկսած[9]։ Սակայն լանջապանակները պահպանվել են նաև ուրարտական, վաղ հայկական և ավելի ուշ ժամանակաշրջաններում։ Ուրարտական լանջապանակներ հայտնաբերվել են Կարմիր բլուրի № 38—40 բնակարաններում[10]։ Լանջապանակները բրոնզե գոտիների նման միաժամանակ ծառայել են որպես զարդարանք։ Ջուլֆանում հայտնաբերված լանջապանակի 4,5 սմ տրամագծով բրոնզե վահանիկները, որոնք զարդարված են պզուկներով (տախ. 2, նկ. 1), ունեն անցքեր՝ հաստ կաշվին կարելու համար։ Նման պզուկներով պղնձե վահանիկներ են հայտնաբերվել նաև Թրիալեթում, Փարվանա լճի մոտ, Կուֆտինի պեղումների ժամանակ[11]։ Բացի վահանիկներից, նշված դամբարանում հայտնաբերվեցին նաև բազմաթիվ պղնձե այլ զարդեր, որոնք նույնպես ունեն լանջապանակին ամրացնելու հարմարանքներ։ Ջուլֆանի լանջապանակը բավական նման է Գոլովինոյի VI դամբարանից գտնվածին։

Հայտնաբերված 3 ամաններն էլ պատրաստված են նուրբ ճաշակով։ Հանգուցյալի աջ ուսից վերև դրված էր բարակ պատերով մի փոքրիկ թաս (տախ.

---

[2] С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении (3—1 тысяч до н. э.), Ер., 1966, стр. 22—23, таб. 3, рис. 4.

[3] Հ. Մնացականյան, Դամբարանի պեղումները Գոլովինոյում, Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, Ե., 1959, հ. 5, էջ 18։

[4] Б. А. Латынин, Погребения с молоточковидными булавками в Предкавказье, Арх. сборник, вып. 9, Л., 1967, стр. 56, рис. 46.

[5] Հ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 35—38։

[6] С. А. Есаян, Защитное вооружение в древней Армении (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1962, էջ 198—202)։

[7] А. А. Ивановский, По Закавказью, материалы по археологии Кавказа, М., 1894, вып. 6, табл. 8.

[8] Հ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 33։

[9] И. М. Дьяконов, Общественный и государственный строй древнего Двуречья шумер, М., 1959, стр. 178—179.

[10] Б. Б. Пиотровский, Кармир блур, том 3, Ер., 1955, стр. 20. С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ер., 1966, стр. 101—102.

[11] Е. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тб., 1941, стр. 229.



Տախտակ 1



Sufunuh 2



1



2

Տախտակ 3

1

2

Sufumuly 4

2, նկ. 2), որի բերանի տրամագիծը 11,5 սմ է, բարձրությունը՝ 4,5, իսկ տակի տրամագիծը՝ 5 սմ։ Թասն ունի բարակ ու նուրբ շուրթեր, կողքից՝ բլթակ (պոզիկ), իսկ հատակին՝ փոսիկ՝ անոթը բռնելու համար։ Նման թասերն, չնչին տարբերությամբ, իրենց զուգահեռներն ունեն Առաջավոր Ասիայում, Հայաստանում և թվագրվում են մ. թ. ա. VI—IV դդ-ով[12]։ Այդ թասերի կրկնօրինակներից գտնվել են նաև Շամշադինում։ Հանգուցյալի գլխի մոտ դրված էին նաև վարդագույն, մի անզարդ սափոր ու մեկ թասիկ (տախ. 2, նկ. 3, 4)։ Թասիկն ունի 3,5 սմ բարձրություն, բերանի 13 սմ լայնություն, իսկ սափորը՝ 19,5 սմ բարձրություն, բերանի՝ 5 և հատակի՝ 8 սմ լայնություն։

Երրորդ դամբարանում հայտնաբերված բոլոր զարդերը կանացի են։ Դամբարանի կավամաններից թասիկը և սափորը նման են երկրորդ դամբարանից գտնվածներին։ Ուշագրավ են հանգուցյալի արծաթյա զարդերը (տախ. 2, նկ. 8), որոնցից մատանին անզարդ է, իսկ կոտրված ապարանջանի ծայրերը վերջանում են գեղեցիկ նախշերով։ Կիսալուսնաձև կրծքազարդը (պեկտորալը) պատրաստված է արծաթյա շատ բարակ թիթեղից, ունի կետազարդ և գծազարդ նուրբ ու խիտ նախշեր։ Ոսկե և արծաթե նման կրծքազարդեր, այլաձև զարդանախշերով, հայտնաբերվել են Արմավիրում[13]։

Չորրորդ դամբարանը գտնվում էր I և II դամբարաններից 2 մ դեպի հարավ (երկարությունը՝ 1,56, գլխի կողմի լայնությունը՝ 86, ոտքերինը՝ 60 սմ)։ Դամբարանի ստորին շերտում հայտնաբերված բրոնզեդարյան շրջանի խեցիների մնացորդները ենթադրել են տալիս, որ ժամանակին քանդվել է հին դամբարանը և տեղադրվել նորը։

Հանգուցյալի գլխի մոտից հայտնաբերվեց նախշազարդ վզիկով, տանձանման իրանով կարմրավուն մի սափոր, որը ունեցել է լայն կանթ՝ ներքևից մինչև բռնակի վերևի մասը ձգվող խորաքանդակ ակոսներից կազմված խիտ ու համաչափ նախշերով (տախ. 1, նկ. 8)։ Նման սափորի ավելի փոքր տեսակը հայտնաբերվել է Հացավանի ամրոցի պեղումների ժամանակ։ Նույն դամբարանում գտնվել են 13 սմ բարձրությամբ, լայնաբերան, միականթ անզարդ բաժակ և մի ջարդված թասիկ։ Դամբարանում գտնվեցին նաև երկաթե շեղանկյունաձև երկու խոշոր նետասլաքներ (տախ. 1, նկ. 3, 1—2), որոնց զուգահեռները հանդիպում են Թեյշեբաինում[14]։ Թաղումը կատարված էր զույգ հանգուցյալներով, կան ապակուց և ագաթից պատրաստված ուլունքներ (տախ. 2, նկ. 6)։

Հիշյալ և մնացած դամբարաններում հայտնաբերված պաստայից, ագաթից, սարդիոնից, ապակուց պատրաստված սպիտակ, կապույտ, գորշ, կանաչ, փիրուզե գույնի ուլունքներ հաճախ հանդիպում են նաև ավելի վաղ շրջանի դամբարաններում, որոնց արտադրությունը կրում է տեղական բնույթ։

Ճանապարհաշինարարության ժամանակ ավերված 8 և անվթար մնացած երկու դամբարաններից հայտնաբերված սափորները բաժանվում են 2 խմբի։

Առաջին խմբի սափորները (տախ. 3, նկ. 1) ունեն լայն, աղեղային կանթեր, որոնք սկսվում են անմիջապես շուրթից ու միանում լայնացող մա-

---

12 Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 101։

13 Г. А. Тирацян, Золотая пектораль из Армавира, Советская археол., 1968, № 4, стр. 190—198.

14 А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ер., 1961, стр. 137—138.

սում։ Սափորների մյուս խմբի (տախ. 3, նկ. 2) պատերն ավելի հաստ են և ունեն կապույտ միջնաշերտ։ Ի տարբերություն առաջին խմբի սափորների, սրանց կանթերը շեղ են, սկսվում են շուրթի տակից և միանում գրեթե փորի մեջտեղում։ Սափորների այս խմբին նման է Կարմիր բլուրի քաղաքային թաղամասի III դամբարանից հայտնաբերված սափորը, որը, ըստ Հ. Մարտիրոսյանի, բնութագրվում է որպես վաղ հայկական շրջանի մշակույթի խեցեղեն[15]։

Հինգերորդ դամբարանի երկարությունը 1,57 սմ է, միջին լայնությունը՝ 82 սմ, խորությունը ծածկասալից՝ 1 մ։ Հանգուցյալը թաղված էր գլխով դեպի արևելք, որի աջ և ձախ կողմերում դրված էին երկու լայնաբերան, աննախշ սափորներ (տախ. 4, նկ. 1)՝ պատրաստված մանր, ավազախառը կավից։ Սրանցից մեծն ունի 26 սմ բարձրություն, բերանի 7,5 և հատակի 10,5 տրամագիծ, իսկ փոքրը՝ 22 սմ բարձրություն, բերանի 8 և հատակի 11 սմ տրամագիծ։ Սափորները ունեն գոգավոր տակեր և պռունկից ցած իջնող լայն կանթեր։ Կավամանների մոտ կային քայքայված պոչով մի խոշոր նետասլաք (տախ. 1, նկ. 3) և ագաթից ու ապակուց պատրաստված ուլունքներ (տախ. 2, նկ. 7)։

Վեցերորդ դամբարանը, նույնպես երկշերտ, գտնվում էր V-ից 2 մ հեռավորության վրա, դեպի արևելք։ Վերջինիս ստորին շերտից հայտնաբերվեցին վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանի՝ հաստ պատերով, փայլուն, սև գույնի կավամանների բեկորներ։ Դամբարանի երկարությունը 1,62 սմ է, լայնությունը գլխի կողմից՝ 86 սմ, իսկ ոտքերի կողմից՝ 57 սմ, խորությունը ծածկասալից՝ 1,05 սմ։ Հանգուցյալը թաղված էր կողքի վրա, գլխով դեպի արևելք։ Նրա շուրջը դրված էին երկու կարմրավուն կավամաններ (տախ. 4, նկ. 2)։ Սափորն ունի լայն, շրջանաձև, զարդարուն կանթեր, 30 սմ բարձրություն, բերանի 10 և հատակի 12 սմ տրամագիծ։ Մյուս կավամանը նույնպես կարմրավուն է։ Հանգուցյալի մոտ դրված էր նաև ուղղանկյունաձև ծայրով, թիաբերան, երկաթե մի նետասլաք (տախ. 1, նկ. 1. 3—4)։

Վեցերորդ դամբարանից 3 մ հեռավորության վրա, որտեղից անցնում է այժմյան ճանապարհը, ավերվել էր ևս մի դամբարան, ուր խեցիները, դրժբախտաբար, ավելի շատ էին վնասվել։

Դամբարանում հայտնաբերված արծաթյա դրամը, Խ. Մուշեղյանի բնորոշմամբ, Պարթև Արշակունիների՝ Միհրդատ 2-ի (մ. թ. ա. 123—88) դրախմա է՝ թագավորի պատկերով (տախ. 1, նկ. 5)։ Վերջինիս ստորին շերտում նույնպես հայտնաբերվեցին վաղ բրոնզեդարյան շրջանի 2 նախշազարդ սափորներ։ Այս դամբարանից ոչ հեռու, վթարված դամբարանի ջարդված կավամաններից մեկում դրված էր մեկ այլ արծաթյա դրամ, որի վրա պատկերված է Պարթև Արշակունիների Օրոտ I թագավորը (տախ. 1, նկ. 6)։

Ջուլֆանի վաղ հայկական շրջանի խեցեղենը գույնով, պատրաստման տեխնիկայով ու որակով նման է Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների վաղ հայկական շրջանի դամբարանների խեցեղենին և պատկանում է տեղական արտադրությանը։

Ջուլֆանում և առհասարակ Նոյեմբերյանի շրջանի մի շարք վայրերում լայն տարածում գտած վաղ հայկական հուշարձանների բնութագրությունը

---

[15] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 143։

ցույց է տալիս, որ դեռևս հիշյալ ժամանակաշրջանից տեղաբնիկ ժողովուրդներն արդեն անցել էին երկաթի լայն մշակման։

Ջուջևանի դամբարանադաշտի վաղ հայկական և ավելի ուշ դարերին պատկանող հուշարձանների քննությունն ապացուցում է, որ տեղաբնիկ հայկական ցեղերը ոչ միայն ունեին երկաթի սեփական արտադրություն ու նյութական մշակույթ, այլ ակտիվ փոխանակային կապի մեջ էին Առաջավոր Ասիայի երկրների, ամենից առաջ Պարթևստանի հետ։

РАННЕАРМЯНСКИЕ ПАМЯТНИКИ ДЖУДЖЕВАНСКОГО МОГИЛЬНИКА

С. С. ЧИЛИНГАРЯН

Резюме

Территория Ноемберянского района, расположенная на пересечении границ трех закавказских республик, богата ранними армянскими памятниками, которые имеют важное значение в области изучения истории культурной и хозяйственной жизни ранних армянских племен северных районов Армении.

Характеристика раннеармянских памятников, получивших широкое распространение в Ноемберянском, а также северо-восточных районах Армении, не находившихся во владении Урарту, доказывает, что уже в вышеупомянутый период местные жители перешли к массовому производству железа. В то же время формировавшиеся армянские племена не только имели свои собственные пункты по производству железа и высокий уровень материальной культуры, но одновременно находились в активной обменной связи со странами Передней Азии.